ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 213

09 հունիսի 2021 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ /ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՋՐԱՓԻ/ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ , 76-րդ հոդվածի 3-րդ և 78-րդ հոդվածի 2-րդ մասի,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 34 որոշումը, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող /բնակավայր՝ Ջրափի/ սույն որոշման N 1 հավելվածում նշված գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի վարձակալության տրամադրման մրցույթն անցկացնել՝ 2021 թվականի հուլիսի 13-ին, ժամը 12:00-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Երաժշտական դպրոցի շենքում(հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մաղաքյան 2):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի մշտական գործող մրցութային հանձնաժողովին (նախագահ՝ Արտակ Գևորգյան).

1) Մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային www.azdarar.am կայքում զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել հայտարարություն՝ մրցույթի առարկայի, ձևի, անցկացման տեղի, օրվա, ժամի, վարելահողի գտնվելու վայրի, ծածկագրի, մրցույթի պայմանների ու պահանջների, մրցույթի առարկայի նախնական գնի մասին:

2) Վարելահողի մրցույթը կազմակերպել՝ ՀայաստանիՀանրապետության հողային օրենսգրքի 78-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

3. Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստը՝ համաձայն N 2 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2021 թվականի հունիսի 09

քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ԹԻՎ 213 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՋՐԱՓԻ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողի կարգը | Հողի ոռոգման հասանելիությունը (ջրովի, անջրդի) | Օգտագործման տրամադրման նպատակը | Հաղորդակցուղիների առկայությունը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (նեղությունների) առկայությունը | Մրցույթի ձևը | Վարձակալության ժամկետը (տարի) | Մրցույթի մասնակցության նախավճարի չափը մեկնարկային վարձավճարի նկատմամբ (դրամ) (%) | 1 հա վարելահողի վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնքի Ջրափի բնակավայր | 08-098-0110-0041 վկայականի N 04052021-08-0058 | գյուղատնտեսական | վարելահող | 5,883168 | II | Անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Ապահովված է ճանապարհով | Չկան | բաց | 25 | 5 | 6000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ԹԻՎ 213 ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՋՐԱՓԻ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ

Մրցույթի կազմակերպիչը՝ ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքապետարան:
Մրցույթի անցկացման օրը՝ 2021 թվականի հուլիսի 13 -ին, ժամը՝ 12:00-ին:
Մրցույթի անցկացման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի երաժշտական դպրոցի շենք(հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Մաղաքյան 2):
Մրցույթի ձևը և անցկացման կարգը՝ բաց հրապարակային սակարկությունների ձև, որի արդյունքում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ ամենաբարձր վարձավճարի չափ և լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը:
Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2021 թվականի հուլիսի 9-ը ժամը՝ 18:00:
Մրցույթի մասնակցության վճարի չափը՝ 2000 (երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
Այլ մանրամասների համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան՝ մրցութային հանձնաժողովին:
Վարելահողի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափը՝

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողի կարգը | Հողի ոռոգվածության աստիճանը (ջրովի, անջրդի) | Օգտագործման տրամադրման նպատակը | Հաղորդակցուղիների առկայությունը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Մրցույթի ձևը | Վարձակալության ժամկետը (տարի) | Մրցույթի մասնակցության նախավճարի չափը մեկնարկային վարձավճարի նկատմամբ (դրամ) (%) | 1 հա վարելահողի վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնքի Ջրափի բնակավայր | 08-098-0110-0041 վկայականի N 04052021-08-0058 | գյուղատնտեսական | վարելահող | 5.883168 | II | Անջրդի | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Ապահովված է ճանապարհով | Չկան | բաց | 25 | 5 | 6000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ